A close-up, artistic photograph of a robotic arm. The arm is primarily white with a black perforated section. It is illuminated with vibrant blue light on the left and red light on the right. The background is dark with some blurred green and blue lights.

# ՀՀ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ  
2017

# Աննախադեպ փոփոխություններ շրջանաձև երթևեկությամբ խաչմերուկներում

Հաշվի առնելով մայրաքաղաքում տրանսպորտային միջոցների օրեցօր աճող քանակով պայմանավորված խցանումների առկայությունը՝ շրջանաձև երթևեկությամբ մի շարք խաչմերուկներում իրականացվել են երթևեկության կազմակերպման փոփոխություններ, որոնց արդյունքում երթևեկության առավելությունը տրվում է շրջանաձև երթևեկության հատվածում գտնվող տրանսպորտային միջոցներին:





## Փոփոխությունից հետո

- Հանրապետության հրապարակում իսպառ վերացել են տրանսպորտային միջոցների կուտակումները
- երկու անգամ պակասել է նյութական վնասով ճանապարհատրանսպորտային պատահարների քանակը
- Հրապարակ մուտք գործող փողոցների հետիոտնային անցումների վրա հետիոտնի վրաերթի ոչ մի դեպք չի արձանագրվել





# Երթևեկելի գոտիների ավելացում

Տրանսպորտային միջոցների կուտակումներից և հապաղումներից խուսափելու նպատակով Երևան քաղաքի մի շարք ծանրաբեռնված խաչմերուկներում կատարվել են 1.3 առանցքային կրկնակի հոծ գծանշման տեղափոխություն, որի արդյունքում խաչմերուկի մոտակա հատվածներում ստեղծվել են երթևեկելի լրացուցիչ գոտիներ, որտեղից թույլատրվում է կատարել միայն ձախ ջրջադարձ կամ հետադարձ:





## Փոփոխությունից հետո

- էականորեն ավելացել է խաչմերուկների թողունակությունը
- բարձրացել է երթևեկության անվտանգության մակարդակը
- նվազել են ճանապարհատրանսպորտային պատահարները

Օրինակ՝ Կոմիտասի պողոտայից դեպի Վաղարշյան փողոց ձախ շրջադարձ կատարելու ժամանակ մինչև փոփոխություններ կատարելը երեկոյան ժամերին հնարավոր էր լինում լուսացույցի 3-ից 4 աշխատանքային ցիկլից հետո միայն մանևրն ավարտել, իսկ այժմ՝ 1-ից 2 ցիկլի ժամանակ:





Փոփոխությունների  
վերաբերյալ բազմաթիվ  
քաղաքացիներ իրենց  
գոհունակությունն են  
հայտնել  
հեռախոսակապի և  
սոցիալական ցանցերի  
միջոցով:

**Anna Velitsyan**  
August 17 · 11

Աղոթք՝ Կոմիտասի պողոտայի երթևեկության բարեփոխման հեղինակների առողջության

Տեր, օրինիր այն փայլուն ուղեղների տերերին, ովքեր հղացան բարեփոխելու վարորդներին ահավասիկ գեհեՆային տանջանքների ու կտտանքների ենթարկող Կոմիտասի պողոտայի երթևեկության կարգը, պարզևիր առողջ կյանք և լույսով լցրու արտերկրներում վերապատրաստված այն երիտասարդների հոգիները, ում պայծառ ուղեղներում ծնվեց լուծումը՝ 4-ից 5 րոպե ժամանակում մեզ՝ մահկանացուներին, այդ վիթխարի պողոտան ծայրից ծայր կտրելու հնարավորությունը շնորհելու, արդ դա է ճշմարիտը, որ գտնվեց և ընծա է մեզ՝ մեղաավորներին, որ արժանի չէինք Քո բարությանը, հավիտյանս, ամեն:

Like Comment

Erik Antaryan, Christina Antarian and 29 others

**Gohar Sargsyan** Ան, ես Կոմիտասի հոգին էր իջել վրադ 😊 մեռա  
Like · Reply · August 17 at 11:55pm  
Gohar Sargsyan replied · 2 Replies

**Zara Sara Navasardyan** Դեռա դասերը սկսվեն ավելի լավ կերևա մն ջան  
Like · Reply · 2 · August 18 at 1:08am  
Anna Velitsyan replied · 1 Reply

**Anna Romanovna Galstyan** Սպանեցիր!)))  
Like · Reply · 1 · August 18 at 1:55am  
Anna Velitsyan replied · 1 Reply

**Gayane Vardanyan** Ան, կարո՞ղ ա կույս կանանց տեքստերն էլ ես դու գրում:)))  
Like · Reply · 4 · August 18 at 9:03am  
Gayane Vardanyan replied · 2 Replies

**Siranush Maghakyan** Annaaaaaaaaaa! Or@ mi kusht cicaxov skseciiiiinq! 😊  
Like · Reply · 1 · August 18 at 1:12pm

**Aram Pakhchanian** Գլովագործոց էր:  
Like · Reply · 1 · August 18 at 11:36pm



# Աջ սեկցիայով կահավորված լուսացույցների աշխատանքային ռեժիմի փոփոխություն

Տրանսպորտային միջոցների հապաղումներից և հնարավոր խցանումներից խուսափելու նպատակով Երևան քաղաքի մի շարք խաչմերուկների աջ սեկցիայով լուսացույցների աշխատանքային ռեժիմներում կատարվել են փոփոխություններ, որի արդյունքում սեկցիայի ուղղությամբ դեպի աջ տրանսպորտային միջոցները արդեն երթնելում են անընդհատ առանց արգելող ազդանշանի հանդիպելու:





## Փոփոխությունից հետո

- Տվյալ հատվածներում ճանապարհատրանսպորտային պատահարներ չեն արձանագրվել
- միաժամանակ բարձրացել է նշված փողոցների թողունակությունը

Ուսումնասիրությունները շարունակվում են այլ խաչմերուկներում ևս երթևեկությունը նույն կերպ կազմակերպելու համար:





# Լուսացույցների տեղափոխություն երթնեկելի գոտու վրա

Լուսացույցների տեսանելիությունը բարելավելու նպատակով Երևանի մի շարք փողոցների լուսացույցները երթնեկելի մասի աջ կողմից տեղափոխվել և տեղակայվել են երթնեկելի մասի վրա:

Միաժամանակ ձախ սեկցիաների փոխարեն տեղադրվել են երեք ազդանշանով տրանսպորտային S.2 տիպի լուսացույցներ, որոնց միջոցով խաչմերուկներում երթնեկությունը տվյալ գոտուց կարգավորվում է մեկ որոշակի ուղղությամբ:



## Նշված փոփոխությունների շնորհիվ

- զգալի բարելավվել է լուսացույցների ազդանշանների տեսանելիությունը
- նվազել է վարորդների կողմից լուսացույցի ազդանշանը չնկատելու հետևանքով խախտումներ թույլ տալու հավանականությունը
- 20-ից 30%-ով նվազել են նաև ճանապարհատրանսպորտային պատահարները





# Նոր հետիոտնային անցումներ

Չկարգավորվող հետիոտնային անցումների հատվածներում հետիոտների անվտանգությունը բարձրացնելու նպատակով թվով 11 լուսացույցով չկարգավորվող հետիոտնային անցումներ կազմակերպվել են արհեստական անհարթությունների վրա, որոնք կահավորվել են համապատասխան ճանապարհային նշաններով:

Նախատեսվում է արհեստական անհարթությունների վրա կազմակերպել նաև Հանրապետության հրապարակի հատվածի բոլոր հետիոտնային անցումները:





# Անվտանգության կղզյակ

Տրանսպորտային միջոցների կուտակումներից և խցանումներից խուսափելու նպատակով Բաղրամյան պողոտա-Մոսկովյան փողոց խաչմերուկում կատարվել է երթևեկության կազմակերպման փոփոխություն: Ոլաստմասյա պահպանապատերից կառուցված եռանկյունաձև անվտանգության կղզյակի շնորհիվ Բաղրամյան պողոտայով Սայաթ-Նովա պողոտայի ուղղությամբ երթևեկող տրանսպորտային միջոցների համար լուսացույցը, Կանգ-Գիծ գծանշումը և տվյալ հատվածի հետիոտնային անցումը մոտ 25 մետր տեղափոխվել են դեպի նշված խաչմերուկ, ինչի շնորհիվ՝

- մեծացել է տվյալ խաչմերուկի թողունակությունը
- Բաղրամյան պողոտայի երթևեկելի առաջին գոտուց աջ շրջադարձով դեպի Մոսկովյան ու Մարյան փողոցներ երթևեկող տրանսպորտային միջոցները նշված մասերը կատարում են անընդհատ՝ առանց լուսացույցի արգելող ազդանշանին հանդիպելու





## GPS տեղորոշիչ համակարգեր

Ճանապարհապարեկային ծառայության ավտոմոբիլներում տեղադրվել են 15 GPS տեղորոշիչ համակարգեր, որոնք հնարավորություն են տալիս առցանց տեսնել ծառայողական ավտոմոբիլների գտնվելու վայրը և հետևել դրանց շարժին: Նշված համակարգը թույլ է տալիս դեպքի վայրեր ուղարկել առավել մոտ գտնվող կարգախմբերին, ինչպես նաև առավել արդյունավետ վերահսկել նրանց ծառայությունը:



## Ուժեղացված ծառայություն դպրոցամերձ տարածքներում

Ուսումնական տարին սկսվելու  
կապակցությամբ Ճանապարհային  
ուստիկանության կարգախմբերը  
սեպտեմբերի 1-ից իրականացրել են միամսյա  
ուժեղացված ծառայություն  
Հանրապետության դպրոցամերձ  
տարածքներում: Նոր ուսումնական տարվան  
ընդառաջ ՀՀ ոստիկանության պետի  
հանձնարարականով Ճանապարհային  
ուստիկանությունը մի շարք այլ  
միջոցառումներ է իրականացրել  
մայրաքաղաքի դպրոցամերձ  
Ճանապարհահատվածներում՝ առավել  
անվտանգ երթևեկության կազմակերպման  
նպատակով:

Մասնավորապես՝

- նվազեցվել է տրասպորտային միջոցների  
առավելագույն թույլատրելի  
արագությունը
- թարմացվել են Ճանապարհային  
նշանները և գծանշումները





## Թեժ գիծ 177

Հուլիսի 3-ից գործում է Ճանապարհային ոստիկանության Օպերատիվ կառավարման կենտրոնը: Սա Ճանապարհային ոստիկանության համակարգի վերջին նորամուծություններից ևս մեկն է: Կենտրոնը հնարավորություն ունի 1-77 հեռախոսահամարով միաժամանակ ընդունել մինչև 6 հեռախոսազանգ, բացի այդ, հնարավորություն է ստեղծվել առցանց ռեժիմով հետևելու այն խաչմերուկների երթևեկությանը, որոնք կահավորված են Ճանապարհային ոստիկանության տեսախցիկներով: Օպերատիվ կառավարման կենտրոնի առկայությունը հնարավորություն է տալիս առավել հրատապ արձագանքել քաղաքացիների ահազանգերին:



Երթևեկության անվտանգության  
բարձրացմանն ուղղված միջոցառումները  
կրում են շարունակական բնույթ:





An aerial photograph of a city intersection. The central area is a large, oval-shaped plaza with a complex, geometric pavement design in shades of grey and blue. The design consists of interlocking squares and rectangles. Surrounding the plaza are several streets with traffic lanes, crosswalks, and parking spaces. There are several cars and a few buses visible on the roads. The buildings around the intersection are multi-story, light-colored structures with many windows. A green lawn is visible in the upper part of the image.

Հանրապետության հրապարակ


Փոփոխություններ շրջանաձև երթևեկության  
խաչմերուկներում



# Անվտանգության կղզյակի





An aerial photograph of a city intersection. The image shows a multi-lane road with white dashed lines and arrows indicating traffic flow. There are several crosswalks marked with yellow and black stripes. Buildings of various heights and colors surround the intersection. Trees and greenery are scattered throughout the scene. In the center of the image, there is a yellow text overlay in Armenian script.

Նոր  
երթնեկեղի  
գոտիներ

**P.S.**



